ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ N 2/5

ք. Երևան 16 հոկտեմբերի 2025 թ.

««ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԹԵՄ ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ, ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒ ԱՎԱՐՏՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ու ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետերով՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2024 թ. մարտի 28-ին հաստատված ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ՍԹԵՄ դպրոցի սովորողների փոխադրման, սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, քննությունների, ամփոփիչ ատեստավորման անցկացման ու ավարտման կարգում» (այսուհետ՝ կարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) կարգի 2-րդ կետը 2-րդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Յուրաքանչյուր ուսումնական տարվա դեկտեմբեր-հունվար ամիսներին 10-12-րդ դասարանների սովորողները հանձնում են նաև կիսամյակին քննություններ այն առարկաներից, որոնք հանձնելու են որպես փոխադրական քննություններ»:

2) Կարգի 4-րդ կետը «Փոխադրական» բառից հետո լրացնել «և կիսամյակային» բառերով:

3) Կարգի 5-6-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. 10-րդ դասարանում սովորողը կարող է շարունակել ուսումը կիսամյակային և/կամ փոխադրական յուրաքանչյուր քննությունից 8 և ավելի միավոր գնահատվելու դեպքում: 11-րդ և 12-րդ դասարաններում սովորողը կարող է շարունակել ուսումը, եթե նպատակային ծրագրով առարկաների քննությունից ստացել է 10 և ավելի, իսկ մյուս քննություններից՝ 8 և ավելի միավոր:

6. Այն սովորողը, որի՝ տվյալ ուսումնական տարվա բոլոր առարկաների տարեկան միջին գնահատականը 1-4 միավոր է, ազատվում է դպրոցից»:

4) Կարգի 7-րդ, 9-րդ ու 10-րդ կետերում «հետևյալ փոխադրական» բառերը փոխարինել «կիսամյակային և փոխադրական հետևյալ» բառերով, իսկ «ՍԹԵՄ (բնագիտամաթեմատիկական)» բառերը փոխարինել «Բնագիտամաթեմատիկական» բառով:

5) Կարգում «խորացված (նպատակային)» բառերը փոխարինել «նպատակային (խորացված)» բառերով, իսկ «Հայոց պատմություն» բառերը փոխարինել «Հայաստանի պատմություն» բառերով:

6) Կարգի 11-րդ կետում «ապա իր ընտրությամբ կարող է ազատվել» բառերը փոխարինել «ապա նա ազատվում է» բառերով: Նույն կետը «փոխադրական» բառից առաջ լրացնել «կիսամյակային և» բառերով, «որն ուսումնասիրում է» բառերից հետո լրացնել «(բացառությամբ ռուսաց լեզվի)» բառերով:

7) Կարգի 12-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12. Ուսումնական առարկաներից կիսամյակային գնահատականներ նշանակվում են «Մուդլ» կամ դպրոցի կողմից ընդունված այլ կրթական հարթակում ինքնաշխատ եղանակով տվյալ կիսամյակում առկա և կիսամյակային քննությունների (սահմանված լինելու դեպքում)

գնահատականների հիման վրա: Տարեկան գնահատման համար հաշվի են առնվում սովորողի կիսամյակային և փոխադրական քննությունների գնահատականները»:

8) Կարգի 13-րդ կետի վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Վերաքննություններին չներկայանալու կամ վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ առարկայից 1-3 միավոր ստանալու դեպքում սովորողն ազատվում է դպրոցից»:

9) Կարգի 14-կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«14. Կիսամյակային, փոխադրական ու ավարտական քննությունները կազմակերպվում և անցկացվում են քննական հանձնաժողովների կողմից, որոնց կազմը հաստատում է դպրոցի տնօրենը: Բոլոր քննական առաջադրանքները կազմվում են դպրոցի կողմից»:

10) Կարգի 15-կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«15. Կիսամյակային քննություններից 1-7 (նպատակային ծրագրի դեպքում՝ 1-9) միավոր գնահատված լինելու կամ քննության օրը չներկայանալու դեպքում սովորողը վերաքննություն է հանձնում տվյալ ուսումնական տարվա հունվար-փետրվար, իսկ փոխադրական քննությունների դեպքում՝ հունիս-օգոստոս ամիսներին: Վերաքննություններին չներկայանալու կամ վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ առարկայից 1-3 (գնահատման 10-միավորային սանդղակից) կամ 1-7 (նպատակային ծրագրի դեպքում՝ 1-9՝ գնահատման 20-միավորային սանդղակից) միավոր ստանալու դեպքում սովորողը հանձնում է 2-րդ վերաքննությունը հետևյալ ժամկետներում՝ կիսամյակային քննությունների դեպքում՝ փետրվարի 23-28-ը, փոխադրական քննությունների դեպքում՝ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում: 2-րդ վերաքննություններին չներկայանալու կամ վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ առարկայից 1-7 (նպատակային ծրագրի դեպքում՝ 1-9՝ գնահատման 20-միավորային սանդղակից) միավոր ստանալու դեպքում սովորողն ազատվում է դպրոցից»:

11) Կարգը լրացնել 15.1 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«15.1. Եթե սովորողի տարեկան անբավարար գնահատական/ները այն առարկայից/ներից է, որը հանձնելու է որպես փոխադրական քննություն, ապա վերջինս չի հանձնում տվյալ առարկայից վերաքննություն, և փոխադրական քննության արդյունքը համարվում է որպես տարեկան գնահատական՝ ստացած գնահատականը համապատասխանեցնելով 10-միավորային սանդղակին»:

12) Կարգի 21-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «21. Յուրաքանչյուր կիսամյակ սովորողները կամ սովորողների խմբերը (խմբում՝ մինչև 7 անդամ), ըստ դպրոցի կողմից հաստատված ժամանակացույցի, ներկայացնում են նախագծային/հետազոտական աշխատանքները, որոնք գնահատվում են հանձնաժողովի կողմից ու գրանցվում սովորողի առարկայական թղթապանակում որպես ձևավորող գնահատականի բաղադրիչ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2024 թ. մարտի 28-ի թիվ 13/2 որոշման

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Հ. Վ. Հովհաննիսյան

ԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԹԵՄ ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ, ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՒ ԱՎԱՐՏՄԱՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) ՍԹԵՄ դպրոցում (այսուհետ՝ դպրոց, կամ ՍԹԵՄ դպրոց) սովորողին առնչվող այն հարաբերությունները, որոնք պարունակում են առանձնահատկություններ ու կարգավորման բնույթով տարբերվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգից»:

2. ՍՈՎՈՐՈՂԻ ԴԱՍԱՐԱՆԻՑ ԴԱՍԱՐԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ, ԱՎԱՐՏՈՒՄՆ ՈՒ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

2. ՍԹԵՄ դպրոցի սովորողները փոխադրվում են հաջորդ դասարան տարեկան գնահատականների ու փոխադրական քննությունների միջոցով: Փոխադրական քննություններն անցկացվում են գրավոր կամ բանավոր՝ ըստ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշման ու սահմանած ժամանակացույցի: Յուրաքանչյուր ուսումնական տարվա դեկտեմբեր-հունվար ամիսներին 10-12-րդ դասարանների սովորողները հանձնում են նաև կիսամյակին քննություններ այն առարկաներից, որոնք հանձնելու են որպես փոխադրական քննություններ:

(2-րդ կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 16.10.2025 թ. N 2/5 որոշմամբ):

3. Քննական առաջադրանքները մշակվում են դպրոցի կողմից:

4. Փոխադրական և կիսամյակային քննությունները գնահատվում են 20-միավորային համակարգով:

(4-րդ կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 16.10.2025 թ. N 2/5 որոշմամբ):

5. 10-րդ դասարանում սովորողը կարող է շարունակել ուսումը կիսամյակային և/կամ փոխադրական յուրաքանչյուր քննությունից 8 և ավելի միավոր գնահատվելու դեպքում: 11-րդ և 12-րդ դասարաններում Սովորողը կարող է շարունակել ուսումը, եթե նպատակային ծրագրով առարկաների քննությունից ստացել է 10 և ավելի, իսկ մյուս քննություններից՝ 8 և ավելի միավոր:

6. Այն սովորողը, որի՝ տվյալ ուսումնական տարվա բոլոր առարկաների տարեկան միջին գնահատականը 1-4 միավոր է, ազատվում է դպրոցից:

(5-6-րդ կետերը փոփոխվել են ԵՊՀ գիտական խորհրդի 16.10.2025 թ. N 2/5 որոշմամբ):

7. 10-րդ դասարանում սովորողները հանձնում են կիսամյակային և փոխադրական հետևյալ քննությունները՝

- բնագիտամաթեմատիկական ուղղությամբ սովորողները՝
    1) «Հայոց լեզու և գրականություն»,
    2) «Մաթեմատիկա» (Հանրահաշիվ, Երկրաչափություն),
    3) «Անգլերեն» (կամ այլ օտար լեզու՝ բացառությամբ ռուսաց լեզվի):
- հասարակագիտական (հումանիտար) ուղղությամբ սովորողները՝
    1) «Հայոց լեզու և գրականություն»,
    2) «Պատմություն» (Հայաստանի պատմություն, Համաշխարհային պատմություն),
    3) «Անգլերեն» (կամ այլ օտար լեզու՝ բացառությամբ ռուսաց լեզվի):

(7-րդ կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 16.10.2025 թ. N 2/5 որոշմամբ):

8. 10-րդ դասարանի ավարտին աշակերտը կատարում է առնվազն երկու առարկայի և/կամ ևս մեկ օտար լեզվի (անգլերեն/ռուսերեն/չինարեն/ֆրանսերեն/գերմաներեն) ընտրություն՝ հաջորդող երկու տարում նպատակային ծրագրով ուսանելու համար:

9. 11-րդ դասարանում սովորողները հանձնում են կիսամյակային և փոխադրական հետևյալ քննությունները՝

- Բնագիտամաթեմատիկական ուղղությամբ սովորողները՝
    1) «Հայոց լեզու և գրականություն»,
    2) «Անգլերեն» (կամ այլ օտար լեզու՝ բացառությամբ ռուսաց լեզվի),
    3) «Նպատակային (խորացված) ծրագրով առարկա - 1»,
    4) «Նպատակային (խորացված) ծրագրով առարկա - 2»:
- Հասարակագիտական (հումանիտար) ուղղությամբ սովորողները՝
    1) «Հայոց լեզու և գրականություն»,
    2) «Պատմություն» (Հայաստանի պատմություն, Համաշխարհային պատմություն),
    3) «Անգլերեն» (կամ այլ օտար լեզու՝ բացառությամբ ռուսաց լեզվի),
    4) «Նպատակային (խորացված) ծրագրով առարկա – 1»,
    5) «Նպատակային (խորացված) ծրագրով առարկա - 2»:

10. 12-րդ դասարանում սովորողները հանձնում են կիսամյակային և ավարտական հետևյալ քննությունները՝

- Բնագիտամաթեմատիկական ուղղությամբ սովորողները՝
    1) «Հայոց լեզու և գրականություն»,

2) «Անգլերեն» (կամ այլ օտար լեզու՝ բացառությամբ ռուսաց լեզվի),
3) «Նպատակային (խորացված) ծրագրով առարկա - 1»,
4) «Նպատակային (խորացված) ծրագրով առարկա - 2»:

- Հասարակագիտական (հումանիտար) ուղղությամբ սովորողները՝
  1) «Հայոց լեզու և գրականություն»,
  2) «Պատմություն» («Հայաստանի պատմություն», «Համաշխարհային պատմություն»),
  3) «Անգլերեն» (կամ այլ օտար լեզու՝ բացառությամբ ռուսաց լեզվի),
  4) «Նպատակային (խորացված) ծրագրով առարկա - 1»,
  5) «Նպատակային (խորացված) ծրագրով առարկա - 2»:

(9-10-րդ կետերը փոփոխվել են ԵՊՀ գիտական խորհրդի 16.10.2025 թ. N 2/5 որոշմամբ):

11. Եթե սովորողի՝ 11-12-րդ դասարաններում նպատակային (խորացված) ծրագրով դասընթացը «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Հայաստանի պատմություն» կամ «Համաշխարհային պատմություն» (Հասարակագիտական ուղղության դեպքում), «Անգլերեն» (2 ուղղության դեպքում) առարկաներից որևէ մեկն է կամ երկուսը, ապա նա ազատվում է «Նպատակային (խորացված) ծրագրով առարկա-1-ի» և/կամ «Նպատակային (խորացված) ծրագրով առարկա 2»-ի քննություն(ներ)ից: Եթե սովորողը չի ուսումնասիրում «Անգլերեն» առարկան, ապա կիսամյակային և փոխադրական քննություն է հանձնում այն օտար լեզվից, որն ուսումնասիրում է (բացառությամբ ռուսաց լեզվի):

12. Ուսումնական առարկաներից կիսամյակային գնահատականներ նշանակվում են «Մուդլ» կամ դպրոցի կողմից ընդունված կրթական այլ հարթակում ինքնաշխատ եղանակով տվյալ կիսամյակում առկա և կիսամյակային քննությունների (սահմանված լինելու դեպքում) գնահատականների հիման վրա: Տարեկան գնահատման համար հաշվի են առնվում սովորողի կիսամյակային և փոխադրական քննությունների գնահատականները:

(11-12-րդ կետերը փոփոխվել են ԵՊՀ գիտական խորհրդի 16.10.2025 թ. N 2/5 որոշմամբ):

13. 10-րդ և 11-րդ դասարաններում սովորողը առավելագույնը 2 ուսումնական առարկայից տարեկան 1-3 (գնահատման 10-միավորային սանդղակից) միավոր գնահատված լինելու դեպքում վերաքննություն է հանձնում տվյալ ուսումնական տարվա հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-25-ն ընկած ժամանակահատվածում: Վերաքննությունների առաջադրանքները մշակվում են դպրոցի կողմից: Վերաքննություններին չներկայանալու կամ վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ առարկայից 1-3 միավոր ստանալու դեպքում սովորողն ազատվում է դպրոցից:

14. Կիսամյակային, փոխադրական և ավարտական քննությունները կազմակերպվում և անցկացվում են քննական հանձնաժողովների կողմից, որոնց կազմը հաստատում է դպրոցի տնօրենը: Բոլոր քննական առաջադրանքները կազմվում են դպրոցի կողմից:

15. Կիսամյակային քննություններից 1-7 (նպատակային ծրագրի դեպքում՝ 1-9) միավոր գնահատված լինելու կամ քննության օրը չներկայանալու դեպքում սովորողը վերաքննություն է հանձնում տվյալ ուսումնական տարվա հունվար-փետրվար, իսկ փոխադրական քննությունների դեպքում՝ հունիս-օգոստոս ամիսներին: Վերաքննություններին չներկայանալու կամ վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ առարկայից 1-3 (գնահատման 10-միավորային սանդղակից) կամ 1-7

(նպատակային ծրագրի դեպքում՝ 1-9՝ գնահատման 20-միավորային սանդղակից) միավոր ստանալու դեպքում սովորողը հանձնում է 2-րդ վերաքննությունը հետևյալ ժամկետներում՝ կիսամյակային քննությունների դեպքում՝ փետրվարի 23-28-ը, փոխադրական քննությունների դեպքում՝ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում: 2-րդ վերաքննություններին չներկայանալու կամ վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն մեկ առարկայից 1-7 (նպատակային ծրագրի դեպքում՝ 1-9՝ գնահատման 20-միավորային սանդղակից) միավոր ստանալու դեպքում սովորողն ազատվում է դպրոցից:

(13-15-րդ կետերը փոփոխվել են ԵՊՀ գիտական խորհրդի 16.10.2025 թ. N 2/5 որոշմամբ):

16. Եթե սովորողի տարեկան անբավարար գնահատական/ները այն առարկայից/ներից է, որը հանձելու է որպես փոխադրական քննություն, ապա վերջինս չի հանձնում տվյալ առարկայից վերաքննություն, և փոխադրական քննության արդյունքը համարվում է որպես տարեկան գնահատական՝ ստացած գնահատականը համապատասխանեցնելով 10-միավորային սանդղակին:

17. «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաների պարապմունքներից առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը չի ազդում նրա՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ դպրոցն ավարտելու վրա:

18. 12-րդ դասարանում ուսումնական բոլոր առարկաներից տարեկան 4-10 և պետական ավարտական բոլոր քննություններից 8-20 միավոր գնահատված սովորողը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ:

19. Պետական ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված լինելու կամ քննության օրը չներկայանալու դեպքում սովորողը վերաքննություն է հանձնում դպրոցում տվյալ ուսումնական տարվա հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-25-ն ընկած ժամանակահատվածում: Առաջադրանքները կազմվում են Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից:

20. Սովորողը 12-րդ դասարանի ավարտին ավարտական քննություններից կարող է չհանձնել այն առարկաների քննությունները, որոնք հանձնելու է բուհական ընդունելության շրջանակում:

21. Բոլոր առարկաները, բացի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից, ամփոփվում են 12-րդ դասարանի 1-ին կիսամյակի ավարտին: 12-րդ դասարանի 1-ին կիսամյակի մինչև դեկտեմբերի 1-ը յուրաքանչյուր սովորող ընտրում է առնվազն 3 առարկա՝ 2-րդ կիսամյակում ուսումնասիրելու նպատակով:

(21-րդ կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 16.10.2025 թ. N 2/5 որոշմամբ):

22. Յուրաքանչյուր կիսամյակ սովորողները կամ սովորողների խմբերը (խմբում՝ մինչև 7 անդամ), ըստ դպրոցի կողմից հաստատված ժամանակացույցի, ներկայացնում են նախագծային/հետազոտական աշխատանքները, որոնք գնահատվում են հանձնաժողովի կողմից ու գրանցվում սովորողի առարկայական թղթապանակում որպես ձևավորող գնահատականի բաղադրիչ: